UNHCR | Armenia
The UN Refugee Agency

ՄԱԿ-ի Փախստականների գործակալության հրատապ մարդասիրական արձագանքը Գեղարքունիքի, Վայոց ձորի եւ Սյունիքի մարզերի սահմանամերձ համայնքներից տեղահանված ընտանիքներին

Նոյեմբեր, 2022 թվական

ՄԱԿ ՓԳՀ-ն օգնության բաշխման կենտրոնում Վարդենիսի համայնքապետարանի աշխատակիցներին օգնում է դասավորել հիգիենայի պարագաների արկղերը: Գեղարքունիքի մարզ, սեպտեմբերի 20, 2022 թ. © ՄԱԿ ՓԳՀ/Առնո Մուրադյան

UNHCR The UN Refugee Agency | Armenia

Ընդհանուր տեղեկություններ

2022 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին ՄԱԿ ՓԳՀ-ն մարդասիրական օգնություն ցուցաբերեց նույն թվականի սեպտեմբերի 13-14-ին հայ-ադրբեջանական սահմանին ռազմական իրադրության սրման հետեւանքով տեղահանված ընտանիքներին:

ՄԱԿ ՓԳՀ-ն առաջինն էր այն միջազգային կազմակերպություններից, որն անմիջապես արձագանքեց՝ օգնության ձեռք մեկնելով տեղահանված բնակչությանն ու նրանց հյուրընկալած համայնքներին՝ ի պատասխան ՀՀ կառավարության առաջարկին: Մարզային ու տեղական կառավարման մարմինների հետ տուժած մարզերում համատեղ փաստահավաք առաքելությունների եւ հանդիպումների միջոցով ՄԱԿ ՓԳՀ-ն օգնեց բացահայտել բռնի տեղահանված բնակչության առաջնային կարիքները: Դրանից անմիջապես հետո ՄԱԿ-ի Փախստականների գործակալությունը՝ որպես Կառավարության ջանքերի համալրում, կազմակերպեց օգնության բաշխումը՝ փորձելով նվազեցնել տուժած բնակչության առջեւ ծառացած խնդիրները եւ փոքրիշատե թեթեւացնել հյուրընկալող համայնքների հոգսը:

Հակիրճ տվյալներ

1,102 պարագա բաշխվել է

215 տնային տնտեսություն ստացել է աջակցություն

935 անձ ստացել է աջակցություն

ՄԱԿ ՓԳՀ-ն, ընդհանուր առմամբ, տրամադրել է **1,102 ոչ պարենային պարագաներ**. մարմնի խնամքի հավաքածուներ՝ կանանց, տղամարդկանց եւ երեխաներին, ներառյալ՝ մանկական տակդիրներ, ներքնակներով ծալովի մահճակալներ, անկողնային սպիտակեղեն, ծածկոցներ, ջեռուցիչներ, խոհանոցային հավաքածուներ եւ տարաներ: Օգնություն է հատկացվել **935 անձի (215 տնային տնտեսություն),** որոնք ժամանակավոր հանգրվան են գտել Վարդենիս (Գեղարքունիք), Արենի (Վայոց ձոր), Գորիս եւ Տեղ համայնքներում (Սյունիք): Ընդհանուր բյուջեն կազմել է շուրջ 19 միլիոն ՀՀ դրամ (մոտ 50,000 ԱՄՆ դոլար):

Մարդասիրական օգնությունը տրամադրվել է ՄԱԿ ՓԳՀ գործընկեր ՀԿ-ների համագործակցությամբ, ինչը հաջորդեց արտակարգ իրավիճակից հետո ՀՀ կառավարության՝ Արտաքին գործերի, Աշխատանքի եւ սոցիալական հարցերի, ինչպես նաեւ Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունների հետ ունեցած հանդիպումներին: Աջակցությունը տրամադրվել է երեք մարզերում տարածաշրջանային եւ տեղական մարմինների սերտ համագործակցությամբ:

Պարագաներն՝ ըստ տեսակների



ՄԱԿ ՓԳՀ-ն իր երախտագիտությունն է հայտնում Գեղարքունիքի, Վայոց ձորի եւ Սյունիքի մարզպետարաններին, Վարդենիսի, Արենիի, Գորիսի եւ Տեղի համայնքապետարաններին եւ «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ին՝ օգնության ճիշտ ժամանակին եւ թափանցիկ բաշխման համար: Ներքին տեղահանման ենթարկված անձանց՝ համայնքապետարանների սահմանած խոցելիության չափանիշները ներառում են միայնակ տարեցներին, ֆիզիկական եւ (կամ) մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց, կանանց գլխավորած տնային տնտեսությունները, փախստականներին ու նրանց իրավիճակում գտնվողներին: ՄԱԿ ՓԳՀ-ն հանձնառու է շարունակել պետական կառավարման մարմիններին եւ տեղահանված անձանց իր մանդատի շրջանակում աջակցելու ջանքերը:

ՄԱԿ-ի Փախստականների գործակալության Հայաստանի գրասենյակ

Թեժ գիծ 0 8000 0025 | armye@unhcr.org | Մենք՝ սոցցանցերում | help.unhcr.org/armenia unhcr.org/am